Արմավիրի մարզի Ոսկեհատ
համայնքի ղեկավարի
2012 թվականի
երկրորդ կիսամյակայի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի բյուջեն կատարվել է 100,3 -% -ով
   ա) Հողի հարկ – 102,0 %-ով
   բ) Գույքահարկ –101,7 %-ով
   գ)Վարձակալական հ/հ –101,6 %-ով
   դ) սեփական եկամուտներ-101,5 %

2. Ներքոհիշյալ բոլոր աշխատանքները լսվել, քննվել և հաստատվել են ավագանու 6 նիստերի ընթացքում:

3. Կատարվել է փողոցների աղբի հավաքում և հեռացում ամիսը 4 անգամ:

4. Մշտական ուշադրության կենտրոնում են եղել մանկապարտեզի երեխաները, որոնք մշտապես ապահովվել են սննդով և ջեռուցմամբ: Դպրոցահասակ 16 երեխաների համար կատարվել է դպրոց ճանապարհման հանդես, կատարվել է նաև նոր տարվա հանդես:

5. Կիսամյակի ընթացքում 2 անգամ հրավիրվել են տարբեր մասնագիտությունների բժիշկներ, որոնց կողմից անց է կացվել անվճար բուժ. սպասարկում, տրվել է անվճար ակնոցներ բոլոր կարիքավորներին, որի համար մեր խորին շնորհակալությունը տիկին Լարիսա Մուրադյանին:

6. Կիսամյակի ընթացքում վթարվել են 6 փողոցի խմելու ջրագիծը և 4 փողոցների կոյուղագծերը, որոնք վերանորոգվել են համայնքի ջանքերով:

7. Ժամանակին կատարվել է ցորենի և գարու աշնանացանը:

8. Նոր վերանորոգված տարածք է հատկացվել փոստի բաժանմունքին:

9. Պայմանագիր է կնքվել ՀՍՆԻ-ի հետ մշակույթի տան ջեռուցման աշխատանքների համար, որը սկսվել և ավարտվել է տարեվերջին:

10. Ավագանիների որոշմամբ գյուղի անապահով ընտանիքներին հատկացվել է 1.000.000 դրամի օգնություն:

11. Ընթացքի մեջ է դպրոց տանող ճանապարհի ասֆալտապատման խնդիրը:

12. Լուրջ խնդիր է համայնքի որոշ փողոցների խմելու ջրագծերի հիմնանորոգման հարցը:

13. Լուծվել է համայնքի երկու հարկանի վթարային շենքի բնակիչների փոխհատուցման հարցը:

14. Հատկացվել է ուսանողական անվճար ավտոմեքենա ուսանողներին Երևան տանելու համար:

15. Գյուղի 6 փողոցներում անց է կացվել գիշերային լուսավորություն:

16. Բոլոր նորածին երեխաների ընտանիքներին տրվել է միանվագ գումար:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Երոսիսյան